

**ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ
ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱՅՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ**

ք. Երևան

20 հունվարի 2025թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան (այսուհետ՝ Ակադեմիա), ի դեմս նախագահ Աշոտ Սերոբի Սադյանի, որը գործում է Ակադեմիայի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ «Մաթեմատիկայի ինստիտուտ» ՊՈԱԿը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն Ռաֆիկ Հրաչիկի Արամյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

- 1.1 Պայմանագրով Ակադեմիան պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեով նախատեսված 172 729 300 ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:
- 1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, իրականացվելիք գիտական հետազոտությունների (այսուհետ՝ Միջոցառումներ) ակնկալվող գիտական արդյունքները՝ դրանց որակական և քանակական ցուցանիշները, Ծրագրի նախահաշիվը, կատարողների մասին տեղեկությունները, առաջադրանքը և օրացուցային պլանը ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Ակադեմիան իրավունք ունի՝

- 2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,
- 2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,
- 2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ,
- 2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝
 - 2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,
 - 2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),
 - 2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,
- 2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

- 2.2.1 Ակադեմիայի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,
- 2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,
- 2.2.3 Ակադեմիայի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 Ակադեմիան պարտավոր է՝

- 2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,
- 2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

- 2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,
- 2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը Ակադեմիա հանձնել սահմանված ժամկետում,
- 2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,
- 2.4.4 կատարել Ակադեմիայի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,
- 2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Ակադեմիա,
- 2.4.6 Ակադեմիա ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,
- 2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում Ակադեմիա ներկայացնել հիմնավորում,
- 2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում Ակադեմիայի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,
- 2.4.9 Ծրագրի ավարտից հետո Ակադեմիա ներկայացնել Միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,
- 2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Ակադեմիայի հնարավորությունը,
- 2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,
- 2.4.12 Պայմանագրով նախատեսված Միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2026 թվականի հունվարի 24-ը:

3. Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 172 729 300 ՀՀ դրամ:

4. Մշտադիտարկում

- 4.1 Ակադեմիան ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մշտադիտարկում ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:
- 4.2 Մշտադիտարկումն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.05.2020 թվականի N 638-Ա/2 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգի»:

5. Վճարման կարգը և ժամկետները

- 5.1 Ակադեմիան Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:
- 5.2 Ակադեմիան Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6. Կողմերի պատասխանատվությունը

Կողմերը Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրում են պատասխանատվություն՝ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

- 9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:
- 9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից Ակադեմիա ներկայացված Ծրագրի հայտը:
- 9.3 Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Ակադեմիա

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա

ք. Երևան, Մ. Բաղրամյան 24

Հ/հ՝ 900011024115

ՀՎՀՀ՝ 00005673

ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան

Նախագահ՝

(ստորագրություն)

Աշոտ Սերոբի Սարգսյան



Ծրագրի գիտական ղեկավար՝

(ստորագրություն)

Կազմակերպություն

ՀՀ ԳԱԱ «Մաթեմատիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ

Բաղրամյան, 24/5, Երևան, 0019, Հայաստան

Հ/հ՝ 900018005331

ՀՎՀՀ՝ 00009056

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Կազմակերպության տնօրեն՝

(ստորագրություն)

Ռաֆիկ Հրաչիկի Արամյան



Ռաֆիկ Արամյան


**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ**

Մենք՝ ներքոստորագրյալներս, Ակադեմիայի նախագահ Աշոտ Սերոբի Սադյանը և Կազմակերպության տնօրեն Ռաֆիկ Հրաչիկի Արամյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել 20 հունվարի 2025թ. N 1-1/25-I/INSTMATH պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 172 729 300 ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

Ակադեմիա

Նախագահ՝



(ստորագրություն)



Աշոտ Սերոբի Սադյան

Կազմակերպություն

տնօրեն՝



(ստորագրություն)



Ռաֆիկ Հրաչիկի Արամյան

Կ. Տ.

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ
«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

Ակնկալվող արդյունք	Քանակ
ՄԳՇ-ում (Միջազգային գիտատեղեկատվական շտեմարան) հրապարակում՝	30
Այլ պարբերականում հրապարակում՝	5
Գրքեր, մենագրություններ՝	1
Գիտաժողովի նյութեր՝	19

Կազմակերպության տնօրեն՝



Ռաֆիկ Հռաչիկի Արամյան
(ստորագրություն)

Կազմակերպության գիտքարտուղար՝

Դավիթ Դիանա Սերգեյի
(ստորագրություն)

Դավիթ Դիանա Սերգեյի

Կ. Տ.

ՆԱԽԱՀԱՇԻՎ
«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

ՀՀ դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման չափը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1.	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	167 170 000	33 434 000	41 792 500	41 792 500	50 151 000
2.	տնտեսական ծախսեր՝	4 215 000	843 000	1 053 750	1 053 750	1 264 500
3.	այլ ծախսեր՝	1 344 300	268 860	336 075	336 075	403 290
Ընդամենը՝		172 729 300	34 545 860	43 182 325	43 182 325	51 818 790

Կազմակերպության տնօրեն՝

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝



Գևորգ Հրաչիկի Արամյան

(ստորագրություն)

Հովհաննես Արմենակի
Հովհաննիսյան

(ստորագրություն)

Կ. Տ.

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

ՀՀ դրամ

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը
	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	4 215 000
1.	էլեկտրաէներգիայի ծառայություն	2 100 000
2.	գազի ծառայություն	1 300 000
3.	ջրամատակարարման ծառայություն	95 000
4.	կապի ծառայություն	650 000
5.	աղբահանություն	70 000
	Այլ ծախսեր, այդ թվում՝	1 344 300
1.	Նյութեր	300 000
2.	Տեղեկատվական ծառայություններ	405 000
3.	ՀԾ հաշվապահական ծրագրի տարեկան սպասարկման վճար	122 000
4.	Մասնագիտական ծառայություններ	100 000
5.	Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և սպասարկում	50 000
6.	Այլ ծախսեր	367 300

Կազմակերպության տնօրեն՝

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝



Ծաֆիկ Հրաչիկի Արամյան

(ստորագրություն)

Հովհաննիսյան

(ստորագրություն)

Հովհաննիսյան

Կ. Տ.

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ
«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

A - ամսական աշխատավարձ (ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները) D - աշխատաժամանակի շաբաթական տևողություն (ժամ)
B - ամիսների քանակ E - գումարային
C - աշխատաժամանակի ռեժիմ

ՀՀ դրամ

ազգանուն անուն հայրանուն	պաշտոն	A	B	C	D	E
Վարչասպասարկող անձնակազմ						
Արամյան Ռաֆիկ Հրաչիկի	տնօրեն	550 000	12	հիմնական	40	6 600 000
Դավիդովա Դիանա Սերգեյի	գիտաբարտուղար	324 000	12	հիմնական	40	3 888 000
Հովհաննիսյան Հռիփսիկ Արմենակի	գլխավոր հաշվապահ	270 000	12	հիմնական	40	3 240 000
Խուրշուդյան Անահիտ Լևոնի	գործավար	170 000	12	հիմնական	40	2 040 000
Հովհաննիսյան Գոհար Ռաֆիկի	Հաշվապահ-գանձապահ	205 000	12	հիմնական	40	2 460 000
Միրզոյան Լիլիա Ռոմանի	կադրերի մասնագետ	135 000	12	հիմնական	40	1 620 000
Ավանեսովա Լյուդմիլա Գեորգիի	գրադարանի վարիչ	125 000	12	հիմնական	40	1 500 000
Բեկչյան Կարինե Մաթևոսի	տնտեսվար	115 000	12	հիմնական	40	1 380 000
Թադևոսյան Ռոբերտ Նորայրի	համակարգչային ադմինիստրատոր	54 000	12	համատեղություն	20	648 000
Հովհաննիսյան Սեդրակ Վոլոդիայի	տեխնիկ	136 000	12	հիմնական	40	1 632 000
Հարությունյան Մերի Ազատի	հավաքարար	119 000	0	հիմնական	40	0
Սարգսյան Կարինե Մարտիրոսի	հավաքարար	119 000	12	հիմնական	40	1 428 000
Օհանյան Հովհաննես Նիկողայի	պահակ	121 000	12	հիմնական	40	1 452 000
Օհանյան Արմեն Հրանտի	պահակ	121 000	12	հիմնական	40	1 452 000
Մնացականյան Հովիկ Սանդրոյի	պահակ	121 000	12	հիմնական	40	1 452 000
Եսայան Մերի Սամվելի	ավագ լաբորանտ	89 620	12	համատեղություն	20	1 075 440
Մկրտչյան Արման Արծրունի	պահակ	121 000	12	հիմնական	40	1 452 000
Հարության Մարիամ Մարտիրոսի	հավաքարար	119 000	12		40	1 428 000
Գիտական անձնակազմ						
Բաժին Իրական անալիզի						
Կարագուլյան Գրիգորի Արտաշեսի	ղեկավար	476 870	12	հիմնական	40	5 722 440
Հակոբյան Հակոբ Ավագի	Առաջատար գիտաշխատող	221 900	12	համատեղություն	20	2 662 800
Գրիգորյան Գևորգ Ավագի	Առաջատար գիտաշխատող	443 800	12	հիմնական	40	5 325 600
Սահակյան Արթուր Արտուշի	Առաջատար գիտաշխատող	221 900	12	համատեղություն	20	2 662 800
Աղեկյան Սմբատ Արարատի	Գիտաշխատող	137 902	12	համատեղություն	20	1 654 824
Նավոյան Խաժականուշ Վարազդատ	Գիտաշխատող	137 902	12	հիմնական	20	1 654 824
Բաժին Ինտեգրալ և ստոխաստիկ երկրաչափություն						

Համբարձումյան Ռուբեն Վիկտորի	Ղեկավար	476 870	12	հիմնական	40	5 722 440
Պողոսյան Սուրեն Կապուշի	Առաջատար գիտաշխատող	443 800	12	հիմնական	40	5 325 600
Արամյան Ռաֆիկ Հրաչիկի	Առաջատար գիտաշխատող	0	12	ներքին համատեղություն	20	0
Սուքիասյան Հայկ Ստեփանի	Ավագ գիտաշխատող	343 267	12	հիմնական	40	4 119 204
Դավիդովա Դիանա Սերգեյի	Գիտաշխատող	0	12	ներքին համատեղություն	30	0
Նազարյան Արամ Արմենի	Կրտսեր գիտաշխատող	105 163	12	համատեղություն	20	1 261 956
Բաժին Դիֆերենցիալ և ինտեգրալ հավասարումներ						
Պողոսյան Առնակ Վալերիի	Ղեկավար	476 870	12	հիմնական	40	5 722 440
Ներսեսյան Անրի Բարսեղի	Գլխավոր գիտաշխատող	552 931	12	հիմնական	40	6 635 172
Առաքելյան Ավետիք Գենիայի	Ավագ գիտաշխատող	343 267	12	հիմնական	40	4 119 204
Պողոսյան Լուսինե Դավթի	Գիտաշխատող	275 804	12	հիմնական	40	3 309 648
Ղազարյան Հայկ Գեղամի	Առաջատար գիտաշխատող	443 800	12	հիմնական	40	5 325 600
Բարխուդարյան Ռաֆայել Հրայրի	Առաջատար գիտաշխատող	221 900	12	համատեղություն	20	2 662 800
Քամալյան Արմեն Հրաչիկի	Ավագ գիտաշխատող	343 267	12	հիմնական	40	4 119 204
Բաքարյան Տիգրան Կարենի	Գիտաշխատող	137 902	12	համատեղություն	20	1 654 824
Բաժին Մաթեմատիկական ֆիզիկայի մեթոդներ						
Նահապետյան Բորիս Սերգեյի	Ղեկավար	476 870	12	հիմնական	40	5 722 440
Արաքաջյան Լևոն Գուրգենի	Առաջատար գիտաշխատող	221 900	12	համատեղություն	20	2 662 800
Ենգիբարյան Նորայր Բագրատի	Գլխավոր գիտաշխատող	552 931	12	հիմնական	40	6 635 172
Խաչատրյան Խաչատուր Աղավարդի	Առաջատար գիտաշխատող	221 900	12	համատեղություն	20	2 662 800
Բարսեղյան Անի Գառնիկի	Գիտաշխատող	137 902	12	համատեղություն	20	1 654 824
Խաչատրյան Լինդա Ալբերտի	Ավագ գիտաշխատող	343 267	12	հիմնական	40	4 119 204
Խաչատրյան Աղավարդ Խաչատուրի	Առաջատար գիտաշխատող	221 900	12	համատեղություն	20	2 662 800
Բաժին Կոմպլեքս անալիզ						
Ջրբաշյան Արմեն Մխիթար	Ղեկավար	476 870	12	հիմնական	40	5 722 440
Կարապետյան Արման Հովհաննեսի	Ավագ գիտաշխատող	343 267	12	հիմնական	40	4 119 204
Բարսեղյան Գրիգոր Արտաշեսի	Գլխավոր գիտաշխատող	552 931	12	հիմնական	40	6 635 172
Մկրտչյան Ալեքսանդր Զանիբեկի	Գիտաշխատող	275 804	12	հիմնական	40	3 309 648
Ալեքսանյան Սարգիս Հակոբի	Կրտսեր գիտաշխատող	105 163	12	համատեղություն	20	1 261 956
Պետրոսյան Ալբերտ Իսրայելի	Առաջատար գիտաշխատող	221 900	12	համատեղություն	20	2 662 800
Վաղարշակյան Արմեն Աշոտի	Ավագ գիտաշխատող	343 267	12	հիմնական	40	4 119 204
Աշխատավարձային ֆոնդի մնացորդ՝						8810716
Ընդամենը գումար՝						167 170 000

Կազմակերպության տնօրեն՝

(ստորագրություն)

Ռաֆիկ Հրաչիկ Արամյան

Կազմակերպության անձնակազմի կառավարման (ստորագրություն)
ստորաբաժանման ղեկավար՝

(ԱԱՀ)

Կ. Տ.

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

«Հիմնարար մաթեմատիկական հետազոտություններ» ծրագրի
(ծրագրի անվանումը)

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջե:
2. Աշխատանքի նպատակը:
Հիմնարար հետազոտություններ մաթեմատիկական անալիզի, հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության, դիֆերենցիալ և ինտեգրալ հավասարումների, մաթեմատիկական ֆիզիկայի ուղղություններով:
3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները:
4. Միջազգային բարձր նորմերին համապատասխանող հիմնարար մաթեմատիկական հետազոտություններ ծրագրում նշված ուղղություններով, ստացված գիտական արդյունքների տպագրում գրախոսվող, բարձր վարկանիշ ունեցող մաթեմատիկական ամսագրերում, նրանց ներկայացումը միջազգային գիտաժողովներում:
5. Աշխատանքի բովանդակությունը:

Ուղղություն՝ Իրական և կոմպլեքս անալիզ

Թեմա 1. Միևնույն օպերատորներ և BMO տարածություններ:

- Նախատեսվում է ուսումնասիրել BMO-ում սահմանափակության խնդիրը շատ ընդհանուր դրվածքով՝ այն է դիտարկել խնդիրը փափույթ մաքսիմալ օպերատորների համար գնդային բազիսներով օժտված չափելի տարածություններում:
- Նախորդին նմանատիպ խնդիր կդիտարկվի նաև Կալդերոն-Ջիգմունդի, ինչպես նաև ավելի ընդհանուր՝ սահմանափակ տատանումով օպերատորների համար:
- Կդիտարկվի նաև մի քանի սինգուլյար օպերատորների մաժորանտ օպերատորի L^p -նորմերի գնահատականներ կախված օպերատորների քանակից:
- Կդիտարկվի օրթոգոնալ մաժորանտի Մենշով-Ռադեմախերի անհավասարության ընդհանրացումներ, փորձելով պարզել նրանցում առկա հաստատունի լավագույն արժեքը:

Թեմա 2. Բազմաչափ միջարկում և հանրահաշվական կորեր:

- Նախատեսվում է շարունակել ուսումնասիրությունները GC բազմությունների և Գապա-Մաեզթուի վարկածի վերաբերյալ:
- Պլանավորում ենք նաև ստանալ կորերի պատիկ կետերի վերաբերյալ որոշ դասական արդյունքների ապացույցներ, որտեղ պատիկությունները բնութագրվում են մասնական ածանցյալներով:
- Կշարունակվի կոմպլեքս գործակիցներով Ռիկատիի հավասարման նորմալ և էքստրեմալ լուծումների ասիմպտոտիկ վարքի ուսումնասիրությունը:

- Զուգահեռաբար կդիտարկվի նմանատիպ խնդիր երկու առաջին կարգի դիֆֆերենցիալ հավասարումների համակարգի համար:

Թեմա 3. Կոմպլեքս ֆունկցիաների երկրաչափական տեսություն, արժեքների բաշխում, կշռային տարածություններ: Հարմոնիկ ֆունկցիաների հետազոտություն, մոտավորություններ, կիրառություններ կոմպլեքս անալիզում և պոտենցիալի տեսությունում:

- Նախատեսվում է ստանալ Վեյերշտրաս-Լիուվիլի ամբողջ ֆունկցիաների ֆակտորիզացիայի դասական թեորեմի մի նոր համանման բոլոր ամբողջ ֆունկցիաների դասի համար, ուր Վեյերշտրասի արտադրիչի բարդությունը անմիջական կապ կունենա ֆունկցիայի կամայական աճի հետ:
- Նախատեսվում է ներմուծել ու նկարագրել ամբողջ դելտա-սուբհարմոնիկ ֆունկցիաների կամայապես լայն դասեր, ինչը հետազոտության նոր առարկա է:
- Ակնկալվում է ստանալ նոր արդյունք, որը վերաբերում է կամայական D տիրույթում $w(z)$ կամայական անալիտիկ ֆունկցիաների համար մի նոր, ընդհանուր երևույթի՝ a -կետերի մոտիկություն նկարագրությանը: Որակապես այն կարելի է ձևակերպել հետևյալ կերպ. $w(z)$ -ի a -կետերը և b -կետերը պետք է ինչ-որ կերպ մոտ լինեն միմյանց, եթե a, b -ը պատկանում է G տիրույթին, որի վրա w -ն ունի որոշ Ալֆորսյան կղզիներ:
- Նախատեսվում է Ω_n Զիգելի տիրույթում, R_{mn} մատրիցային միավոր շրջանում, C^n բազմաչափ տարածությունում բացահայտ տեսքով գտնել ∂ -համալուծ-հավասարման լուծումների կշռային բանաձևերն ու փորձել ստանալ դրանց կշռային L_p - գնահատականները:
- Փորձ է արվելու ստանալ Կոշու տիպի ինտեգրալի տարբեր կարգի ածանցյալների բանաձևային կապը Վեյլի պոլիէդրների համար և դրա շնորհիվ գնահատել այդ ածանցյալների ողորկությունը Հյուդերի սանդղակով:
- Նախատեսվում է ընթանաբացնել Լերոյ-Լինդելյոֆի թեորեմը, որը կապ է հաստատում շարքի գործակիցները ինտեգրալացնող հոլոմորֆ ֆունկցիայի աճի և սեկտորի միջև ուր անալիտիկ շարունակվում է շարքը:
- Նախատեսվում է շարունակել ուսումնասիրել կանոնավոր անսահմանափակ տիրույթների համար (կոնաձև, գլանային և այլն) հարմոնիկ ֆունկցիայի լավագույն հավասարաչափ մոտավորության հարցը ամբողջ տարածությունում որոշված հարմոնիկ ֆունկցիաներով, ինչպես երկչափ տարածության դեպքում, այնպես էլ եռաչափ տարածությունների համար: Նշված խնդրերի լուծումը հնարավորություն կտա ուսումնասիրելու Դիրիխլեի խնդրի լուծման ասիմպտոտիկական անվերջ հեռու կետի շրջակայքում:

Ուղղություն՝ Հավանականությունների տեսություն և մաթեմատիկական վիճակագրություն

Թեմա 4. «Ինտեգրալային և ստոխաստիկ երկրաչափություն»

Ուղղոնի սֆերիկական ձևափոխություն (ՌՄՁ):

- Տարվելու է աշխատանք համաձայնեցվածության մեթոդի օգնությամբ, շրջելու ՌՄՁն եռաչափ դեպքում, երբ չափիչները տեղադրված են տարբեր հիպերմակերևույթների վրա՝ օրինակ սֆերայի վրա: Նկատենք, որ երկչափ դեպքում 2024-ին հաջողվեց գտնել և տպագրել բարձր վարկանիշ ունեցող մաթեմատիկական ամսագրերում ՌՄՁ նոր շրջման բանաձևեր, երբ չափիչները տեղադրված են կամայական պարզ կորի վրա:

Ստոխաստիկ տոմոգրաֆիա

- Խնդիր է դրված երկչափ դեպքում վերականգնել ուռուցիկ պատկերը, ըստ իր պատահական ուղղորդված լարերի (վեկտոր) բաշխման: 2024-ին հաջողվեց գտնել վերականգնման ալգորիթմ (կարծում ենք առաջին անգամ) կենտրոնական սիմետրիկ պատկերների դեպքում:

Թեմա 5. Մաթեմատիկական ֆիզիկայի անալիտիկ մեթոդները

Փաթեթի տիպի առաջին սեռի ինտեգրալ հավասարումների հետազոտում:

- Ընդհանրացվելու է և կիրառվելու է վերջավոր և անվերջ միջակայքերում փաթեթի տիպի առաջին սեռի հավասարումների լայն դասերի նկատմամբ որոշ նոր մոտեցումներ՝ վոլտերայի տիպի փաթեթի առաջին սեռի ինտեգրալ հավասարումների հետազոտման և արդյունավետ լուծման հարցերում:
- Կետագոտվի փաթեթի տիպի ինտեգրալ հավասարումների լուծելիության վերաբերյալ, որոնք հիմնվում են պրոֆ. Ն. Ենգիբարյանի կողմից առաջարկված ինտեգրալ օպերատորների վոլտերյան ֆակտորիզացիայի գաղափարի վրա: Այդ մեթոդները կիրառել նաև Վիներ-Ջոպֆի առաջին սեռի ինտեգրալ հավասարումների նկատմամբ:

Ուռուցիկ ոչ գծայնությամբ ոչ կոմպակտ ինտեգրալ օպերատորների անշարժ կետերի կառուցումը:

- Կշարունակվի հետազոտություններ ուռուցիկ և գոգավոր ոչ գծայնությամբ որոշ դասերի ոչ կոմպակտ ինտեգրալ օպերատորներով ծնվող ինտեգրալ հավասարումների ոչ տրիվիալ լուծումների գոյության, դրանց որակական հատկությունների ուսումնասիրության, ինչպես նաև բավականին լայն դասերում միակության թեորեմների ապացուցման ուղղությամբ:
- Կմշակվի և կգարգացվի հատուկ իտերացիոն մեթոդներ վերոնշյալ հավասարումների մոտավոր լուծումների կառուցման ուղղությամբ, ինչպես նաև ստացված արդյունքները տարածել բազմաչափ ոչ գծային սկալյար և վեկտորական հավասարումների նկատմամբ:

Թեմա 6. Մաթեմատիկական ֆիզիկայի հավանականական մեթոդները

- Նախատեսվում է հիմնվելով այն արդյունքի վրա, որ մաթեմատիկական վիճակագրական ֆիզիկայի մոդելներում էներգիան և հավանականությունը երկակի հասկացություններ են, ստանալ գիբսյան պատահական դաշտերի հատկությունների ավելի խորացված պատկերացումը:
- Ուսումնասիրվելու են մարտինգալ տարբերության պատահական դաշտերի կիրառումը գիբսյան պատահական դաշտերի մոդելների համար կրիտիկական կետում սպինների գումարի ուսումնասիրությունը:
- Նպատակ է դրվել ապացուցել լոկալ սահմանային թեորեմ էվկլիդեսյան տարածությանների սահմանափակ տիրույթում փոխազդող մասնիկների թվի համար որը կիրառելի կլինի անընդհատ և դիսկրետ, ինչպես դասական այնպես նաև քվանտային համակարգերի համար:

Թեմա 7. Բուլյան ֆունկցիաների գաղտնագրության մեջ:

- Ուսումնասիրել Բուլյան ֆունկցիաների որոշ նոր հատկություններ S-box երի դիզայնի համար: Ուղղություն՝ Դիֆերենցիալ և ինտեգրալ հավասարումներ

Թեմա 8. Դիֆերենցիալ և ինտեգրալ հավասարումներ:

- Կուսումնասիրվեն վերասերվող բազմաշերտ օպերատորներին համապատասխանող սիմվոլների ուսումնասիրությունը: Կարևոր են վերջիններիս վարքը, դրանց հզորությունների և այլ հատկությունների համեմատումները: Կարևոր է հասկանալ բնութագրիչ բազմանդամներին կրտսեր անդամներ ավելացնելու դեպքում հատկությունների փոփոխության ուսումնասիրությունները:
- Կշարունակվեն փաթեթի տիպի օպերատորների հատկությունների ուսումնասիրումը:
- Կդիտարկվեն տեղաշարժով սինգուլյար ինտեգրալ օպերատորների հատկությունները:

Թեմա 9. Վերլուծություններ սեփական ֆունկցիաներով, մոտարկումներ և ինտերպոլիացիա:

- Գլխարկվեն բարձր կարգի դիֆերենցիալ հավասարումներին համապատասխանող վերլուծությունների զուգամիտության արագացման մեթոդները:
- Կուսումնասիրվեն համապատասխան ինտերպոլիացիաները:
- Կմշակվեն կիրառությունների համար բավարար հատկություններ ունեցող ալգորիթմներ:

Թեմա 10. Կիրառական բնույթի հետազոտություններ
Բացատրելի Արհեստական Բանականություն.

- Նախատեսվում է մշակել բացատրելի մեթոդներ կլասիֆիկացիայի, ռեգրեսիայի և կլաստերինգի խնդիրների համար, ուսումնասիրել դրանց հատկությունները և դիտարկել կիրառությունները ամպային ծրագրերի և ենթակառուցվածքների մոնիտորինգի և կառավարման խնդիրներում:

Խաղերի Տեսության Կիրառությունները Ինքնավար Համակարգերի Կառավարման Համար.

- Կուսումնասիրվեն ինքնավար համակարգերի կառավարման խնդիրները՝ հատկապես, երբ վերջիններս գործում են հակառակորդի պայմաններում:

Մեքենայական Ուսուցման Կիրառությունները.

- Կշարունակվեն գրաֆների վրա հիմնված մեքենայական ուսուցման ալգորիթմների հետազոտությունները: Կարևոր են նաև այսպես կոչված ֆիզիկայով ինֆորմացված նեյրոնային ցանցերի կիրառությունը գծային և ոչ գծային տիպի դիֆերենցիալ հավասարումների մոտավոր լուծումների կառուցման համար: Կուսումնասիրվեն թվային լուծումների զուգամիտության հարցերը տարբեր տիպի խնդիրների համար:

Ստեղծարար Արհեստական Բանականության Կիրառությունները.

- Կուսումնասիրվի տվյալների ավտոմատացված դասակարգման խնդիրը լեզվական մեծ մոդելները (LSTU) համար:

Կազմակերպության

տնօրեն (ռեկտոր)


(ստորագրություն)

(անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար

(ստորագրություն)

(անուն ազգանուն)



(ծրագրի անվանումը)

Իրականացվելիք միջոցառման				
h/h	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	կատարման ժամկետները
	Հիմնարար մաթեմատիկական հետազոտություններ	Մաթեմատիկական հետազոտություններ ծրագրում նշված ուղղություններով	1. Գրականության ուսումնասիրություն: Մաթեմատիկական աշխատանքների կատարում:	I եռամսյակ
			2. Աշխատանքների ձևավորում և ձևակերպում: Տեղական և միջազգային գիտաժողովներում արդյունքների ներկայացում:	II եռամսյակ
			3. Մեմինարների կազմակերպում: Համապատասխան մաթեմատիկական ալգորիթմների թվային փորձարկումներ:	III եռամսյակ
			4. Ծրագրային փաթեթներ կազմում: Գիտական հոդվածների տպագրում:	IV եռամսյակ

Կազմակերպության
տնօրեն (ռեկտոր)՝

(ստորագրություն)

(ԽԱՆՈՒՆ ԱՉԳՔԱՆՈՒՆ)

Ծրագրի գիտական ղեկավար

(ստորագրություն)

(անուն ազգանուն)

* Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել եռամսյակային փուլերով: